ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 15-17-ը ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)
2023 թվականի մայիսի 17-19-ը ք. Վելիկի Նովգորոդ (Ռուսաստանի Դաշնություն)
գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

Քրիստինե Համբարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Գործուղման վայրը՝ Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, քաղաք Վելիկի Նովգորոդ:
Գործուղման ժամկետները՝ 2023 թվականի մայիսի 15-17-ը, 2023 թվականի մայիսի 17-19-ը:

4. Հրավիրող կողմը

Եվրասիական արտոնագրային կազմակերպություն (ԵԱԱԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) մտավոր սեփականության պահպանության և պաշտպանության հարցերով միջպետական խորհրդի 13-րդ հերթական նիստին:
Մասնակցություն Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) վարչական խորհրդի (այսուհետ՝ Վարչական խորհուրդ) 42-րդ (13-րդ արտահերթ) նիստին:

6. Քննարկված թեմաները

Մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության միջպետական խորհրդի 13-րդ նիստին, որը կայացել է Մոսկվայում ներկայացվել է

հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտում կատարված աշխատանքները և բարեփոխումները:

Վելիկի Նովգորոդ քաղաքում Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) վարչական խորհրդի 42-րդ (13-րդ արտահերթ) նիստի շրջանակներում քննարկվել է ԵԱԱԿ զարգացման ռազմավարությունը, ԵԱԱԿ 2022 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը, ոլորտում կատարված աշխատանքները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության միջպետական խորհրդի 13-րդ նիստին՝ որպես Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ, ելույթով հանդես եմ եկել՝ ներկայացնելով հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտում կատարված աշխատանքները և բարեփոխումները:

Մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության միջպետական խորհրդի 13-րդ նիստի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում Մտավոր սեփականության դաշնային ծառայության (Ռոսպատենտ) ղեկավար Յուրի Զուբովի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մտավոր սեփականության ազգային համակարգերի զարգացման, տեղեկատվական փոխգործակցության հնարավորությունների, երկկողմ համագործակցության հեռանկարային ծրագրերի, կադրերի վերապատրաստման վերաբերյալ հարցեր:

Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) վարչական խորհրդի 42-րդ (13-րդ արտահերթ) նիստի շրջանակներում քննարկվել են Հայաստանի Հանրապետության համար եվրասիական արտոնագրային կազմակերպության հետ համագործակցության մի քանի կարևոր ուղղություններ՝ Եվրասիական արտոնագրային կազմակերպության փորձագիտական ներուժի օգտագործումը հայտերի փորձաքննության, գործընթացների թվայնացման, ինչպես նաև ուսումնական ծրագրերի, կադրերի վերապատրաստման հարցեր:

2023 թվականի մայիսի 18-ին Վելիկի Նովգորոդում տեղի է ունեցել եվրասիական երիտասարդ գյուտարարներին նվիրված ցուցահանդեսի բացումը: Միջոցառմանը

մասնակցել են Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) անդամ երկրների պատվիրակությունները և Եվրասիական արտոնագրային գրասենյակի (ԵԱԱԳ) նախագահ Գրիգորի Իվլիևը:

Ցուցահանդեսին իրենց նախագծերը ներկայացրել են ԵԱԱԿ անդամ 6 երկրների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրախպետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետությունից իրենց նախագիծն են ներկայացրել Հայկ Վարդանյանը և Տիգրան Գրիգորյանը, որը կոչվում է HunterG: Այն սարքավորում է, որը նախատեսված է սարդերին և կարիճներին լազերի միջոցով հայտնաբերելու և տեղայնացնելու համար, որից հետո միանում է ահազանգը և հնարավորություն է տալիս ոչնչացնել նրանց:

Ցուցահանդեսի շրջանակներում տեղի է ունեցել Ֆորում՝ նվիրված մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությանն ու կիրարկման հարցերին:

Ֆորումի լիագումար նիստին բացման խոսքով հանդես են եկել Վելիկի Նովգորոդի նահանգապետ Ա. Ս. Նիկիտինը, Ռուսաստանի Դաշնության Պետդումայի պատգամավոր Ս. Վ. Կաբիշևը, ԵԱԱԿ նախագահ Գ. Պ. Իվլիևը, Բելառուսի Հանրապետության մտավոր սեփականության ազգային կենտրոնի ղեկավար Վ. Ա. Ոյաբովոլովը և ես:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները

Հաստատվել է անդամ պետությունների մտավոր սեփականության իրավունքների պահպանության և պաշտպանության կիրարկման աշխատանքները, այս ոլորտում իրավախախտումների դեմ պայքարի միջոցառումները, ինչպես նաև ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության առաջին փուլի (2021-2025թթ.) իրականացման գործողությունների ծրագրի իրականացումը:

Հաստատվել է ԵԱԱԿ-ի 2022 թվականի տարեկան հաշվետվությունը:

ԵԱԱԿ-ի և մտավոր սեփականության գրասենյակի միջև ստորագրվել է գյուտերի արտոնագրեր տրամադրելու համար՝ որոնման և հայտերի փորձաքննության ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, որը նախատեսում է միջգերատեսչական համագործակցության ամրապնդում արտոնագրային փորձաքննության անցկացման հարցում, որը կանցկացվի անհատույց հիմունքներով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ընդլայնելու համագործակցությունը ԵԱԱԿ-ի հետ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման ոլորտում:

ԵԱԱԿ-ի հետ համատեղ Մտավոր սեփականության գրասենյակը իր հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգում ներդրել է գյուտերի և արդյունաբերական դիզայնների հայտերի նյութերը 3D մոդելների միջոցով ներկայացնելու հնարավորություն:

ԵԱԱԿ-ի հետ կնքած համաձայնագրի շրջանակներում հնարավորություն է ընձեռնվում ազգային հայտատուների կողմից ըստ էության փորձաքննության ներկայացված գյուտերի հայտերով ԵԱԱԿ-ին պատվիրել ԱՀՊ (PCT) պահանջներին համապատասխան որոնում և ստանալ գյուտի արտոնագրաունակության վերաբերյալ եզրակացություն, որը կարող է հիմք ծառայել գյուտի արտոնագիր տալու մասին Մտավոր սեփականության գրասենյակի որոշման կայացման համար: Համաձայնագիրը կգործի մինչև 2024 թվականի մայիսի 17-ը՝ կողմերի համաձայնությամբ երկարաձգման հնարավորությամբ:

Մտավոր սեփականության դաշնային ծառայության (Ռոսպատենտ) հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Մտավոր սեփականության գրասենյակի պատվիրակությունը այցելի Ռոսպատենտ ծանոթանալու իրենց կողմից մշակված հայտերի էլեկտրոնային գործավարության նոր ծրագրերին՝ հետագայում գրասենյակի էլեկտրոնային համակարգում ներդնելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Քրիստինե Համբարյան **24.05.2023**